ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2005 թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողով նվիրված XX դարի հայ կերպարվեստի ազգային դպրոցի հիմնադիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մարտիրոս Սարյանի (1880–1972) ծննդյան 125-ամյակին:

Բացելով գիտաժողովը, ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆազել Սարգսյանը նշեց. «Ով երբևէ շփվել է Մ. Սարյանի հետ կամ գործ ունեցել, կհաստատի, որ Վարպետի հետ խոսելն անգամ իրենց ոգևորել է և մղել արարման: Երբ 1956-ին Սարյանն ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, դա պատիվ էր ոչ միայն Վարպետի, այլև ակադեմիայի համար»:

Առաջին բանախոսը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանն էր, որն անդրադարձավ Սարյանի գործունեությանը հայկական հուշարձանների պահպանության բնագավառում: Այն սկսվել է տակավին Մոսկվայում անցած դարի սկզբին, այնուհետև շարունակվել Հայաստանում, երբ Սարյանը 1921-ին հաստատվել է Երևանում: Առավել արդյունավետ է եղել նրա գործունեությունը, երբ 1964-ին որպես նախագահ գլխավորել է Պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերությունը:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, «Մարտիրոս Սարյան. վաղ շրջանի ստեղծագործությունը» մենագրության հեղինակ Արարատ Ալասյանը «Ազգայինը Մարտիրոս Սարյանի արվեստում» զեկուցման մեջ նշեց. «XX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ Մարտիրոս Սարյանն առանձնահատուկ տեղ է գրավում: Նա, իրավամբ, համարվում է այդ շրջանի մեր նկարչության ազգային դպրոցի հիմնադիրը, իսկ նրա արվեստը դիտվում է որպես հայ ժողովրդի գեղագիտական ըմբռնումների, գեղարվեստական մտածողության առավել ցայտուն, խոր և ամբողջական գրսևորումներից մեկը»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, արվեստագիտության գոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանը «Մարտիրոս Սարյանը և միջնադարը» զեկուցման մեջ փորձ արեց զուգահեռներ տանել, մի կողմից, Սարյանի հայացքների ու նկարչության, իսկ մյուս կողմից միջնադարյան գեղագիտության ու արվեստի միջև: Այդ զուգահեռներից են պայծառ գույներն ու դրանց կենսական կարևոր նշանակությունը Սարյանի և միջնադարյան հայ արվեստում, դրանց դիտումը իբրև արարչական գործունեության ընկալում:

Անդրադառնալով «Մարտիրոս Սարյանը և Ռուսաստանը» թեմային, Մ. Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Ռուզան Սարյանը նշեց. «Մարտիրոս Սարյանը թե իր կյանքի պատմությամբ, թե իր ստեղծագործությամբ մե-

ծապես կապված է եղել Ռուսաստանի և ռուսական կերպարվեստի հետ: Կրթությունը ստանալով Մոսկվայի գեղարվեստի ուսումնարանում, վարպետության դասեր առած Սերովի և Կորովինի մոտ, Սարյանն եղավ մեկն այն երիտասարդ նկարիչներից, որն առաջ մղեց XX դարասկզբի ռուսական արվեստը դեպի նորն ու առաջադեմը: Ռուս նկարիչներն ու արվեստաբանները բարձր են գնահատել Սարյանի ներդրումը ռուսական մշակույթի զարգացման մեջ, միաժամանակ ընդգծել և արժեքավորել են նրա արվեստի ազգային նկարագիրը, ուրույն ոճն ու անկրկնելի ներկապնակը»:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավիկ Իսահակյանը «Մարտիրոս Սարյան և Ավետիք Իսահակյան. աշխարհի բանաստեղծական ըմբռնումը» զեկուցման մեջ բացահայտեց հիմնական ուղենշային ընդհանրությունը Սարյանի գեղանկարչության և Իսահակյանի բանաստեղծության միջև: Նշեց, որ թեև նրանք գործել են մշակույթի տարբեր բնագավառներում, սակայն գարմանալիորեն իրար հոգևհարազատ են և համահունչ, քանզի նրանց ստեղծագործության ողջ պաթոսն ուղղված է վեր հանելու հարազատ ժողովրդի հոգեկան նկարագիրը և ազգային ոգին:

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, երաժշտագետ Արաքս Սարյանը իր «Կերպարվեստի և երաժշտության եզրերը հայր և որդի Սարյանների ստեղծագործության օրինակով» զեկուցման մեջ նշեց նկարիչ Մարտիրոս Սարյանի գեղանկարչական և Ղազարոս Սարյանի երաժշտամտածողական որոշ սկզբունքների աղերսները: Կոմպոզիտորի 3 ստեղծագործության («Հայաստան» սիմֆոնիկ պաննո, սիմֆոնիա №2, կվարտետ) հիման վրա զեկուցողը ներկայացրեց նկարչի արվեստի ներգործությամբ կոմպոզիտորի երկերում ցայտուն արտահայտություն գտած հնչյունի գունային կողմի կարևորության, կոնցեպտուալ ըմբռնումների, արտահայտչամիջոցների օգտագործման յուրօրինակ մեթոդի և ազգային ուղղվածության ընդհանրության հարցերը:

Վաստակավոր նկարիչ Ալեքսանդր Գրիգորյանը բացահայտեց Մ. Սարյանի կերպարը որպես ուսուցչի, ավագ ընկերոջ, մեծ արվեստագետի, որի կողքին ինքը ձևավորվել է որպես նկարիչ և անհատականություն:

ՀՀ ԳԱԱ արեելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը պատմեց իր հուշերը վարպետի հետ ունեցած երեք հանդիպումների մասին:

ԳԱՍ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը, ամփոփելով գիտաժողովի արդյունքները, նշեց, որ ընթերցված զեկուցումները չափազանց հետաքրքիր ու կարևոր էին, և Արվեստի ինստիտուտի տնօրեն Ա. Աղասյանին հանձնարարեց գիտաժողովի զեկուցումները տպագրության պատրաստել առանձին ժողովածուով հրատարակելու համար:

Մարտիրոս Սարյանի ծննդյան 125-ամյակին նվիրված ԳԱԱ գիտաժողովը եզրափակեց մեծ նկարչի 2005 թ. ընթացքում նախատեսված հոբելյանական միջոցառումների շարքը:

ՌՈՒԶԱՆ ՍԱՐՅԱՆ